դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

**ՎՃՌԵՑ**

1. «Լուիսոֆտ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի՝ հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

«Լուիսոֆտ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել.

անվավեր ճանաչել «ԼՈՒԻՍՈՖՏ» ՍՊԸ-ն /կոնսորցիում «Դունայս» ՍՊԸ/-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին՝ ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար Համլետ Հարությունյանի 16.04.2026թ-ին կայացրած N ՀՀԱՆ-ԳՔ-2026/01 որոշումը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ** **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

*Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEFD-86BE-4F62-B74C հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։*

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*